

Մ. Ներսիսյան
Պատմ. գիտություններ

ՌՈՒՍՍՈՅԻ «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԱՇԻՆՔ»-Ի ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ
1829 ԹՎԻՆ

18-րդ դարի Ֆրանսիական մեծահամբավ լուսավորիչ Ռուսոյի գլուխ-
գործոցը ամենայն իրավամբ համարվում է «Հասարակական դաշինքի
մասին» նրա հանրահռչակ աշխատությունը։ Այդ հոյակապ տրակտատ-
ար, որ գրվել է 1762 թվին, դեմոկրատական-ոադիկալ քաղաքական մտքի
խոշորագույն կոթողներից մեկն է։ Նա խորը հեռավոր է թողել ոչ միայն
ֆրանսիական, այլև երոպական մյուս երկրների սնուցիչ զազափարա-
խոսությունների վրա։ Ես սնուցիչն պրակտիկան հիմնավոր-
ող զազափարների անսպառ ազդեցություն է հանդիսացել մի շարք սերունդների
համար։ Խիղիս, առաջավոր զազափարներ ազդարարող Ռուսոյի այդ
ուշխոսությունն առաջնակարգ տեղ է բռնել նաև Հայ դեմոկրատ լուսա-
վորիչների և մասնավորապես Խաչատուր Աբովյանի ու Միքայել Նալ-
բանդյանի իդեական արևնայում։

Ունեցել ենք մենք արդյոք Ռուսոյի այդ գործի հայերեն թարգմա-
նությունը։ Հայ հասարակական մտքի քարոզչական պատմության համար
կարևոր նշանակություն ունեցող այդ հարցին այժմ մենք կարող ենք դրա-
կան պատասխան տալ։ Ռուսոյի «Հասարակական դաշինք» աշխատու-
թյունն ամբողջությամբ հայերենի (գրաբարի) է թարգմանվել դեռևս
1820-ական թվականներին։ Ի՞նչ թարգմանություն է արդ։

Երևանի Գրական թանգարանի արխիվային բաժնում պահվում է բա-
վական խնամքով կազմված մի ձեռագիր աշխատություն, որ ունի հետևյալ
խորագիրը․

«Իաշն րնկերական և կամ սկզբունք արիեստի կառավարութեան։

Չոր յօրինեալ է Յովհաննէս Յակար Ռուսո իմաստասէր ճիւղէվրացի, ի
գաղղիական լեզու։

Թարգմանեալ ի գաղղիական բնագրէ ի հայ բարբառ, ի յովհաննէ
Տէր-Կարապետեան Պրուսացւոյ։ Հասարակար։ Յամի տեառն 1829 ի մար-
տի 27»։

Չեռազրի առաջին էջի վրա կա մտտ հարյուր տարի հետո արված
հետևյալ նշումը, որ կարևոր է հենց իրեն՝ ձեռագրի պատմության հա-
մար․ «Հանդուցեալ բարձաճճուտ Տիար Յովհաննու այս աշխատութիւնը
Հայոց Ազգային Մատենադարանի կնիքի սրբին Ատոմ Հ. Տէրոյենց. Կ.
Պոլիս, 3 ապրիլի 1923»։

Չեռազրի, որ բաղկացած է 335 էջից, հանդիսանում է «Հասարակա-
կան դաշինք»-ի ամբողջական հայերեն թարգմանությունը։ Տէր-Կարա-
պետյանը թարգմանության տեքստին կցել է իր առաջարանը, ծանոթու-
թյունները, հավելվածը և վերջարանը։ Թարգմանության որակի մասին

դս դաւտար տալու համար բերենք Երկու քաղվածք: «Հասարակական գա-
չինք»-ի առաջին գլուխը թարգմանված է այսպես.

«Մարդս ծնեալ է ազատ և ամենայն ուրեք կայ ի ծառայութեան: Հու-
մարի գանձն աչք այլոց՝ Եւմ և՛ թողացուցանէ գանձն լինելի գերի իբրև
զայս: Մ՞րպիտի փոխութիւն իցէ այս՝ և՛ զիտեմ: Եւ զինչ այն իցէ՝ որ
որինաւոր անելի կարասցէ զայս. կա՛մք են ինձ յուժանել զայս խնդիր:

«Էթե ի միաս ածէի զգորութիւն միայն՝ և զարդասիւն որ ի նմանէ,
մա՛րթ էր ինձ ասել: Մինչ բնագատի որ հնազանդիլ՝ և հնազանդէ՛, բա-
րբ՝ աննէ. այլ յորժամ նշկահել կամի լծոյն՝ և փտարանջիցէ, շա՛ս գոր-
ծէ: Քանզի պաշտօտան Եղեալ ազատութեան իւրոյ նովին իրաւամբք՝ որով
յափշտակեցաւ յինքենէ, զաս զարձեալ վերստին զայն ի ձեռս ածել ունի
իւր հիմն, կամ միւսն չունէր ինչ իրաւունս ի բանեալ զայն ի նմանէ.
Բայց նսիրական իմն իրաւունք է զաչն բնկերական, որ այլոցն ամենայ-
նի է իբրև հիմն: Այլ այս իրաւունք և՛ զպիտէ ի բնութենէ. ուրեմն՝ ի
պայմանադրութիւնքս հիմնի: Գիտելի պէ՛տք են թէ, ո՞ր պայմանք են սորայ:
Ետիս քան զայսորիկ քննութիւն՝ արժան է ինձ կատարանելի զհիմն՝ յորոյ
գերայ զշինուածն ամբարձից»:

«Հասարակական գաչինք»-ի «Ժողովրդի մասին» գլխի առաջին սրար-
բերութիւնները թարգմանված են այսպես.

«Ձոր օրինակ նախ քան զամբաստնալ շինուած ինչ քննէ ճարտարապետն
և շափէ գլետին, տեսանել թէ բաւակա՞ն իցէ շինուածոյն. մնա նմին և
իմաստուն օրէնսդիրն և չ Երբէք մատենադրէ օրէնս բարիս բառ ինքեան՝
այլ քննէ զառաջինն. արդեօր ժողովուրդն՝ յորոյ վերայ զօրէնսն գնել ու-
նի, կարիցէ՞ աշխարհ օրինին այնմիկ: Վասն որոյ Պղատուն և՛ կամեցաւ
օրէնս գնել արկադացոց և կիւրենացոց, զիտելով՝ զի բնչեզր էին այս
ժողովուրդք, և և՛ կարէին հանդուրժել հաւասարութեան: Վասն սորին
պատճառի տեսանին ի գրէտէ գեղեցիկ օրէնք, և օրինապանցք բազումք. զի
Մինոյս օրէնս եզ մոյեկան մարդոց:

«Ժողովուրդ բազում ծաղկեցին յամենայնի՝ որոց շէր Երբէք տարեալ
բարի օրինաց, և որոց էր կարողութիւն՝ սակաւ ինչ միջոց ժամանակի
գտաւ վայելելի յայն, բազումք ի ժողովրդոց՝ որպէս և ի մարդկանէ ի
մանկութեան կակուղք են զիտընկձելիք, իսկ ի ծերութեան լինին անուղղե-
լի. մինչ առ անդամ մի հաստատի սովորութիւն, և կանխակալ մտահա-
ճութիւնք արժատանան՝ նորոգելն կամիլ զնոսա բազմափտանդ աշխատու-
թիւն է և զորձ անփաստակն և՛ մաս կարէ ժողովուրդն հանդուրժել այնմ՝
որ ի գիմի հարկանի ախտից իւրոց յեղձանելի զայնոսիկ. նման ժանտ և
անբժշկելի ախտիցն՝ որք ի կատարութիւն փոխին ընդ տեսութեան տե-
ղոյն»:

Տեր-Կարապետյանը թարգմանութեան տեքստին կցած իր առաջարու-
նում, ծանոթութիւններում, հավելրիւմում և վերջարանում բնթերցողին
ծանոթացնում է Ռուսոյի հետ, բացատրում է նրա ուսմունքի գլխավոր
գրույթները, նշում է, որ Ռուսոյի աշխատութեան մեջ կան հակասական
տեսակետներ և այլն: Թարգմանիչը հիշեցնում է, որ Ռուսոյի աշխատու-
թեան մեջ կան փտանդափոր մտքեր, բայց ամէլացնում է, թէ դրա հետ

1. Այստեղ թարգմանիչը զիտաՎորյալ կերպով փոխել է բնագրի իմաստը:

միասին կան նաև ուսանելի բաներ, որի համար և նա ընթերցողներին առաջարկում է իր թարգմանութիւնը. իր դրած վերջաբանում Տեր-Կարապետյանն ասում է.

«Թերևէ ասարակուսեացի ոք՝ թէ ընդէ՞ր զայսպիսի զիրս՝ դոր յաւէա ի հուր արկանել արժան էր՝ ևս արժանաւոր դասեցի ի հայ լեզու թարգմանութեան: Յայտնի պատճառ՝ և առ բազումս ի դրչաց սովորեալ այն է. զի՛ բանք պիտանիք դոն ի սմա»:

Մի այլ անդ թարգմանիչն ընթերցողին խորհուրդ է առլիս վերցնել հեղինակի լալ մաքերը և մերժել վտակերը: «Մի՛ շատ վատահասալ ի բանս մատենագրիս. այլ և՛ թէ դրադէա ոք իցէ որ ընթեւնուն՝ ասցէ ի սմանէ դրարիսն, և դիտտանսն ի բաց ընկեսցէ»:

Թարգմանիչը քննադատում է Ռուսոսոյին զլիսովորապէս երկու հարցում.

ա) ևս շի համաձայնում Ռուսոսոյի հետ, որ մարդկային հասարակութեան մէջ երբեքիցե կարող է հավասարութիւն լինել, և ասլա՛ բ) պաշտպանութեան տակ է անում քրիստոնէական կրօնը և դոնում է, որ բարեկարգ հասարակութեան մէջ և քրիստոնէական հավատն իրար շէն հակասում: Տեր-Կարապետյանն այս խնդրին է նվիրում թարգմանութեանը կցած իր հավելւածը, որն ունի հետեյալ վերնագիրը. «Ճառ ի վերայ անհակասակութեան քրիստոնէական հաւատոց և արհեստի կառավարութեան. ընդդէմ Ռուսոյի և նմանեաց նորա. հանդերձ յուժմամբք ստարկութեանց»:

Առանձնապէս հետաքրքիր է այն հանդամանքը, որ թարգմանիչը քրիստոնէական կրօնը վառարանող և աթէիստների դէմ ուղղած իր մտքերի ճշտութիւնն աղացուցելու համար վկայակոչում է Ֆրանսիական հռչակագիրը դեմոկրատ լուսավորիչ, ուսուցիտ-սոցիալիստ Մարլիին, բերելով նրա մի աշխատութիւնից համառոտօրէն քաղվածքներ: Թարգմանիչը դրական կերպով է արտահայտվում Մարլիի մասին և անդամ նրան որակում է «հանճարեղ իմաստասեր»:

Ռուսոսոյի և նրա կողմնակիցների ուսմունքը թարգմանիչը հետոյալ կերպ է բնութագրում. «Յովհաննէս Յակոբ Ռուսո ճինկվրացի այր իմաստասէր՝ զակատեալ է դհետ նոր ազանդոյանաստեւած նիւթապաշտից, կամ բնախօս ազանդաւորաց. որք զամենայն ինչ քննեն ըստ բնթացից բնութեան և բաց յայսմանէ ճանաչեն և ո՛չ ինչ»:

Թարգմանիչը, ինչպէս վերեւում նկատեցինք, իր ծանոթութիւնների մէջ հաճախ խոսում է այն մասին, որ Ռուսոսոն իրար հակասող տեսակետներ է դարգացնում: Այսպէս, օրինակ, «Հասարակական դաշինք»-ի երրորդ մասի Տ-րդ գլխում Ռուսոսոյի արտահայտած այն միտքը, թէ ո՛չ բոլոր ժողովուրդները կարող են օգտվել արատութիւնից, թարգմանիչը համարում է աղաղակող հակասութիւն: Այդ սովոր չա դրում է.

«Ի սմին իսկ մատենի բազմիցս պնդէր՝ թէ ամենայն մարդիկ ծնանին ազատք, ուստի ամենքն բուն հարցեն դնախկին ազատութիւն ստանալ: Իսկ աստ ամենին բնդհակառակն ասէ թէ՛ ազատութիւն ոչ է ամենայն մարդոյ համարուն. ուրեմն ո՛չ ամենքն ծնանին ազատք: Ապա առաջին առած սորա հակասակա՛ն է վերջնոյս: Հակասականաց մին ճշմարիտ է հարկաւ և միւսն սուս: Իսկ թէ ո՞ր ի սոցանէ ճշմարիտ է, յա՛յտ է թէ ևսինս. զի ունի իւր վկայ և զմոնթեօքիօ, իսկ յառաջներումն զիւր խելս միայն: Իայց

մնայ զհետնակէն ասել ստախոս և հակասարան. զի թէ Երկուց հակասականաց մին ճշմարիտ է, բայց որ զերկուսն միանդամայն հաստատէ՝ ստախոս է. և սորա ճշմարիտն խօսիլ զխտուածով է որպէս կարգ բանիցն թելադրեաց. իսկ սուան՝ բնականն:

Խարզմանութեան տեքստին կցված ծանոթութիւններէց Երևում է, որ Տեր-Կարապետայանը սեպուքիկական կարգերի կողմնակից է: Այս հարցում թարգմանիչը անդամ ձախ գիրքերից հարձակում է դործում Թուսոյի վրա, մեղադրելով նրան անհետեոյականութեան մէջ: «Հասարակական դաշինք»-ի Երբորդ մասի 2-րդ գլխում միապետութեան մասին Թուսոյի արած խորհրդածութիւնները հասկանալով այնպէս, որ իրր Թուսոն կառավարութեան լայնադուշն ձեր համարում է միապետութիւնը, Տեր-Կարապետայանը խիստ քննադատութեան է ենթարկում նրան, հայտարարելով, թէ Թուսոյի այդ տեսակէտը շատ վտանգաւոր է և հակասում է հենց իրեն՝ հեղինակի բազմիցս քարոզած մաքերին:

«Ինչքան թարգմատանդ, — գրում է թարգմանիչը, — առաձն վերոյ գրեալի և մեկնութիւն նորա. այլ և իւրոց իսկ սկզբանց Թուսոյի հակասակ: Սա ինքն էր որ հաստատէր ուրեք ի սոյն գիրս՝ հանդերձ համօրէն խմբի մասենադրաց արհեստի կրտսւթարութեան, թէ կառարեյադոյնն ի տեսակ կառավարութեան՝ հասարակապետութիւնն է: Ընդ նովին անուամբ փակեաց սա և դմիապետութիւն. այլ զի նչ և ստիցէ՝ հարկ ի վերայ կայ խոստովանիլ թէ յայնժամ ընդ պատուականադոյնիս զնուազ պատուականն ստորակարգեաց: Իսկ աստ ասէ՝ թէ առաւել զօրադոյն Եղանակ կառավարութեան՝ է կառավարութիւն միոյ միայնոյ: Ա՛յն է՝ միապետութիւն: Աւանիկ հակասակախօսութիւնն»:

Ասյա օրինակներ բերելով Հոռմի պատմութիւնից, Տեր-Կարապետայանն աշխատում է Հոռմի անկումը բացատրել նրանով, որ հասարակապետութիւնը փոխվեց միապետութեան:

«Զի՛ք բարեկարգ հասարակապետութիւն կործանեալ, — շարունակում է Տեր-Կարապետայանը, — բայց թէ յառաջադոյն կամ զեղծ կանոնն ունիցի. կամ անսակ ինչ մտցէ ի նա բռնաւորութիւն, որ է շափազանցութիւն միապետութեան: Չկարգեղոնի հասարակապետութիւն կորոյս անհաստատարմութիւս, իսկ հոռմէականն կորեալ յեա փոխելոյ կառավարութեան: Այս յայտնի փորձոյս է՝ մեզ և պատճառ զօրաւոր որպէս կարձեմ. լայնադոյն դնել զհասարակապետութիւնն: Օրէնք ունին լինել կառավար պետութեան, և աւանդ նորա ի ձեռն ժողովրդեան. զորոյ զկատարումն նոյն ինքն ժողովուրդն հանձնէ իշխանի ուժեմն. որ իշխէ ո՛չ զօրութեամբ իւրոց մասնաւոր կամաց, այլ կամօք ժողովրդեան, որ է ասել ընդհանուր կամօք: Ո՛չ կարէ վճռել ինչ բայց թէ բազմութեամբ քուէից ժողովրդեան. բազմապատիկ օրինակք են այսմ ի Հոռմէական պատմագրութիւնս: Չայստիկ և ինքն Թուսո խոստովանէր վերադոյնն»:

Թուսոյի հայ թարգմանչին ծանոթ էն Եղել բազմաթիւ փոխառութեան և աշխատութիւններ: Չանաղան ասիթներով նա հիշատակում է ականափոր շատ մտածողներ ի և զբանց թիում՝ Սպինոզային, Վոլտերին, Դիդրոյին, Դայանբերին, Կոնդորսէին, Մոնթէսքիոյին, Լայբնիցին և Էպիկուրին:

Ո՛վ է Հովհաննէս Տեր-Կարապետայանը «Հասարակական դաշինք»-ի

հայ թարգմանիչը: Նա արեմտաճայ պատմութեան մեջ հայտնի Հովհաննես Չամուռճյան Տերոյենցն է (1801—1888): Չարմանայի է, թայց փաստ է: 1820-ական թվականներին Ռուսոսյի շատ մտքերի հետ համաձայնող, «Հասարակական դաշինք»-ի մեջ քարտի մտքերն տեսնող, հասարակապետական կարգերի կողմնակից երիտասարդ Չամուռճյանն արդեն մի քանի տասնյակ տարիներ հետո հանդես եկաւ որպէս հայուսոսյականների թշնամի, սլահպանողական, հետադեմ բանակի համոզված ներկայացուցիչներից մեկը: կատարված կոպուցիան ակնհայտ է:

Մեր գրականութեան մեջ եղել են հիշատակութիւններ այն մասին, որ Չամուռճյանը հայերենի է թարգմանել Ռուսոսյի աշխատութիւններից մեկը: Իր «Ստիւտեր հին դեմքերու մեջ» (հրատարակված Կ. Պոլսում, 1901 թվին) Հ. Գ. Մրմրյանը գրում է, որ Չամուռճյանը «թարգմանեց դեղեցիկ գրարարի մնեցի փիլիսոփային մեկ հոշակավոր գործը»: Եւ այն հեղինակի «Տաննիններոյ դար ե Հովհ. Պրուսացի Տերոյենց» աշխատութեան մեջ (հրատարակված Կ. Պոլսում, 1908 թվին ասվում էր, որ Չամուռճյանը թողել է Ռուսոսյի «Սկզբունք բողոքական իրավունքի» հայերեն թարգմանութեան ձեռագիրը: Ըստ երևույթին Մրմրյանի տված հենց այս տեղեկութիւնների հիման վրա էլ Միրայել Ղալբանդյանի «Անտիպ երկեր»-ում (հրատարակված Երևանում, 1935 թ.) ասված է, որ Չամուռճյանը «Ֆրանսերենից հայացրել էր Ռուսոսյի ինչ որ մի աշխատութիւնը»:

Ի դեպ՝ Չամուռճյանը կատարել է թարգմանութիւն նաև Մոնթեսքիոյից. Մրմրյանը Չամուռճյանի թողած գրական ժառանգութեան մեջ հիշատակում է նաև մի ձեռագիր՝ հետևյալ վերնագրով. «Մոնտեսքիո—Մեծութիւն ե անկումն հոսովհացուց», 1837 թ. »:

Ռուսոսյի հոշակավոր գործի հայերեն թարգմանութիւնը հրատարակութեան բախտի շարժանուղով. նա մնաց ձեռագիր վիճակում: Սակայն, շնայած դրան, այն փաստը միայն, որ գեղես 1829 թվին Փրանսիական մեծ բուսավորչի հանրահոշակ «Հասարակական դաշինք»-ը թարգմանվել է հայերեն ու հանձնարարվել ընթերցող հասարակութեանը, ինքնին արդեն մի հետաքրքիր երևույթ է հայ հասարակական մտքի զարգացման պատմութեան համար: